Կարծիք

Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը գնահատելու խնդիրը վերջին տասնամյակներին ազգային եկամուտների հաշվառումից տեղափոխվում է դեպի մարդակենտրոն չափումների հարթություն, նշում է ատենախոսը: Ուստի գիտական ջանքերն ուղղված են տնտեսական աճի ոչ թե քանակի, այլ որակի գնահատմանն ու բարելավմանը: Այդպիսի իրողության հիմնական պատճառը պայմանավորված է փաստացի տնտեսական աճի և հասարակության բարեկեցության միջև շոշափելի խզմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տասնամյակներին Հայաստանի և շատ այլ երկրների տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունեցող արտադրական գործոնն արդյունավետությունն է՝ տնտեսական աճի որակի վերաբերյալ հետազոտությունն իրականացվել է ՀՆԱ արտադրության արդյունավետության համատեքստում: Ըստ ատենախոսի՝ աշխատանքը կարող է հիմքեր ստեղծել ՀՀ տնտեսական աճի որակի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների և տնտեսական արդյունավետության գնահատման նոր մեթոդների՝ ՀՀ նյութերով կիրառման համար:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Հետազոտության նպատակը ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության և տնտեսական աճի որակի վերլուծությունն ու գնահատումն է:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ✓ ուսումնասիրել արտադրողականության և տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձը, դուրս բերել առավել տարածված մոտեցումները և մեթոդները, դրանց միջոցով գնահատել ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը, դրա դինամիկան և կառուցվածքը,
- ✓ բացահայտել ՀՆԱ արտադրության արդյունավետության դերը տնտեսական աճի որակի ձևավորման և դրսևորման գործընթացներում,

- ✓ բացահայտել ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները՝ ըստ ոլորտների և վարչատարածքային միավորների, և դուրս բերել դրանցում նկատվող որակական դրսևորումները,
- ✓ հետազոտել տնտեսության որակի ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրել դրա վերաբերյալ մասնագիտական գրականության անդրադարձը, դրա գնահատման միջազգային փորձը և մոտեցումները, ձևավորել տնտեսական երևույթների և ցուցանիշների այնպիսի համակարգ, որը համալիր կերպով կնկարագրի տնտեսության որակական նկարագիրը,
- ✓ գնահատել և վերլուծել ՀՀ տնտեսության որակն ու դրա դինամիկան,
- ✓ բացահայտել ՀՀ տնտեսական աճի և դրա որակի միջև խզումը,
- ✓ մոդելավորել տնտեսության որակը, ստացված մոդելը կիրառել ՀՀ նյութերով և դրա միջոցով աջակցել տնտեսության որակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակմանը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմքվիսթի համաթվի և ստոխաստիկ սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:
- Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
- Մշակվել է տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության որակը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը:
- Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ: Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլյացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը ու գործնական նշանակությունը, ինչպես նաև եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հարցերն ու գնահատման միջազգային փորձը»** գլխում ներկայացվել է մասնագիտական գրականության անդրադարձը տնտեսական արդյունավետությանը և տնտեսական աճի որակին, ինչպես նաև դրա գնահատման մոտեցումները և միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը»** գլխում գնահատվել է ՀՀ տնտեսական արդյունավետությունը և դրա աճի կառուցվածքը, ՀՀ ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակները և դրանք համադրվել երկրի տնտեսական աճի հետ, ինչպես նաև նկարագրվել է տնտեսական արդյունքի որակի նոր համաթվի մշակման գործընթացը և մեթոդաբանությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը»** գլխում վերլուծվել են ատենախոսի կողմից մշակված տնտեսական արդյունքի որակի համաթվի դինամիկան, աճի տեմպերը, կայունությունը, կառուցվածքը և դրանում դրսևորվող անհամաչափությունները ՀՀ-ում: Հաջորդիվ մշակված համաթվի մեթոդաբանության հիման վրա կառուցվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որն էլ կիրառվել է ՀՀ նյութերով:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Հեղինակը 2.2 ենթագլխում ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները քննարկելիս վերլուծում է ճյուղային, ներճյուղային տարածքային և այլն կենտրոնացվածության մակարդակները:
   Նախ, հասկանալի չէ ընդհանրապես այս վերլուծության իմաստը աշխատանքի շրջանակներում, քանի որ այն չի կապնվում նախորդ և հաջորդ վերլուծություններին, առավել ևս, որ ՏԱՈՀ գնահատման ժամանակ հեղինակը օգտագործում է լրիվ այլ, ՀԲ կողմից հաշվարկված ցուցանիշ՝ արտահանման **շուկաների կենտրոնացվածության** ցուցանիշը:
   Երկրորդ, ավելի տարակուսելի է ընտրված մոտեցումը, գնահատել օրինակ ճյուղային կամ ընդհանուր առմամբ արտաքին առևտրի կենտրոնացվածության մակարդակները: Այսպես, ճյուղային կենտրոնացվածության ցուցանիշը, այսինքն

տնտեսության ոլորտների հավասարաչափ մասնաբաժինը ՀՆԱ-ում, համարյա ոչինչ չի կարող ասել տնտեսության որակի, կամ քանակի մասին, ավելին մասամբ հակասում է տեխնոլոգիական արդյունավետության աճի գաղափարին: Ըստ հեղինակի ստացվում է, որ ճյուղերի կշիռները ՀՆԱ-ում պետք է ձգտեն հավասարությանը, այսինքն, օրինակ՝ ծառայություններ՝ 25%, արդյունաբերություն՝ 25%, շինարարություն՝ 25% և գյուղատնտեսություն 25%:

Համաշխարհային պրակտիկան փաստում է, որ ինչքան բարձր է երկրի տնտեսական զարգացվածությունը և զարգացմանը զուգընթաց օրինակ ծառայությունների կշիռը ՀՆԱ-ում աճում է, իսկ գյուղատնտեսությանը՝ նվազում: Այսպես, ըստ ՀԲ տվյալների եվրոգոտու երկրների ծառայությունների կշիռը՝ 65.6% է, բարձր եկամուտներով երկրներինը՝ 69.1%, Գերմանիայինը, 62.6% և այլն, իսկ Անգոլայինը՝ 39.7%, ցածր եկամուտներով երկրներինը՝ 32.3% և այլն[1]: Միաժամանակ, օրինակ արդյունաբերության կշիռը հիմնականում բարձր է լինում ռեսուրսներով հարուստ երկրներում, իսկ գյուղատնտեսությունը՝ հիմնականում աղքատ կամ ցածր եկամուտներով երկրներում: Ուստի այս անհամաչափությունները մեղմելու հատուկ կարիք չկա, դա առավելապես օբյեկտիվ գործընթաց է:

Ավելին, հեղինակը գնահատում է նաև արտաքին առևտրի ապրանքախմբերի անհամաչափությունը, որպես ապացույց ներկայացնելով, որ «*ՀՀ արտահանման ամբողջ ծավալի մեջ առավելապես նվազել են սուրճի, թեյի (որոնք Հայաստանում չեն աճում), ... հանքային վառելանյութերի և նավթամթերքի (որոնք Հայաստանում գոյություն չունեն) մասնաբաժինները, դրա հաշվին ավելացել են թռչող ապարատների, ... էլեկտրական սարքավորումների ... (որոնք Հայաստանում չեն արտադրվում) մասնաբաժինները:*» (էջ 70), նույն տրամաբանությամբ նաև ներմուծման մասով:

Կարծում ենք, որ տնտեսության կառուցվածքի և կենտրոնացվածության խնդիրները պետք է քննարկվեր օրինակ, **արտահանելի-ոչ արտահանելի հատված**, կամ **շուկաների** կենտրոնացվածություն, կամ արտահանման **շուկաների կենտրոնացվածություն** և այլն եզրույթներով:

Ելնելով վերոնշյալից, հեղինակի կողմից նշված հետևյալ նորույթը «Որոշվել է ՀՀ տնտեսության ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխությունների» մասամբ կորցնում է իր արդիականությունը:

Միաժամանակ, հեղինակը տնտեսության կենտրոնացվածությունը գնահատել է 2012-2022թթ. տվյալներով, իսկ ՀՀ տնտեսության ըստ ճյուղերի կենտրոնացվածության միջին արժեքները և դրանց և ՀՆԱ միջև կորելացիայի գործակիցները չգիտես ինչու 2006-2021թթ. տվյալներով:

[1] https://data.worldbank.org/indicator/NV.SRV.TOTL.ZS

2. Հեղինակը Մալմքվիսթի ԸԳԱ համաթիվը և ՍՍՄ-ն հաշվարկել է 2000-2021 թթ. և ըստ Համաշխարհային բանկի (ՀԲ) դասակարգման միջին եկամուտ ունեցող 47 երկրների տվյալներով, իսկ ՏՈԱՀ-ը 78 ընտրված երկրի 2005-2022թթ. տվյալներով: Ավելին, Երջանկության համաթիվը 2024թ. տվյալով է, իսկ մյուս ցուցանիշներինը վերջինը 2022թ.: Այսպիսի ընտրության տրամաբանությունը հիմնավորված չէ աշխատանքում և կարող է հանգեցնել ոչ արժանահավատ վերջնական եզրակացությունների: Միաժամանակ, հիմնավորված չէ, թե ինչու են ընտրվել հենց այդ 78 երկիրը: Կարծում ենք, որ եթե առկա են ցուցանիշներ Տանզանիայի մասով, ապա անպայման կլինեն համապատասխան ցուցանիշներ օրինակ, Բրազիլիայի կամ Բելգիայի մասով:
3. ՏՈԱԴՀ բաղադրիչների կշիռների գնահատման մասով, մեր կարծիքով, Ջինիի գործակցին պետք է տրվեր ավելի մեծ նախապատվություն, քանի որ այն համեմատաբար մյուս ցուցանիշների, որոնք որոշ չափով սուբյեկտիվ գնահատված վարկանիշեր են, ավելի հուսալի և չափելի է, հաշվի առնելով նաև նմանատիպ վարկանիշերի մասով բացասական փորձը, օրինակ ՀԲ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշը, որը վերջին շրջանում ծայրահեղ վարկաբեկվել է և սառեցվել:
4. Աշխատանքում առկա են նաև որոշ կառուցվածքային թերություններ, այսպես հեղինակը 1.3 ենթագլխում նորից անդրադառնում է 1.1 և 1.2 ենթագլխում քննարկվող հարցերին, 2.1 ենթագլխում շարունակում է բավականին լայնածավալ տեսական մեջբերումները ԸԳԱ գնահատման խնդիրների մասին, մինչդեռ ենթագլուխը ըստ անվանման նվիրված է ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատմանը: Մեծ հաշվով, 1.3 կետը աշխատանքի մեջ մտցնում է որոշակի խառնաշփոթ, որոշակիորեն խախտում է աշխատանքի սահուն տրամաբանությունը, հեղինակը փորձ է կատարել անդրադառնալ ամենինչին, սակայն ի վերջո այն չի ստանցել աշխատանքի համար կարևոր բովանդակություն:
5. Էջ 71-ում հեղինակը պնդում է, որ ՀՀ աշխատավարձերի բարձրացումը պայմանավորված է ճյուղային կենտրոնացվածությամբ, ինչը առնվազն վիճելի է, դրան շատ այլ պատճառներ կարող են լինել և առկա են: Կամ նույն էջում պնդում է, որ դրա հիմնական պատճառը այլ ոլորտների հաշվին (գյուղատնտեսություն)՝ ծառայությունների ոլորտի աճն է:
6. Էջ 62-ում հեղինակը, հիմնվելով իր կատարած հաշվարկների վրա պնդում է, որ «2000-2021 թթ.-ին միջինում առկա ռեսուրսների պայմաններում երկիրն ապահովել է հնարավոր լավագույն արդյունքի 92%-ը:», այսինքն կարելի է եզրակացնել, որ վերջին երկու տասնամյակներում ՀՀ-ն համարյա 100 տոկոսանոց արդյունք է ապահովել, ինչը բացարձակ չի համընկնում մասնագետների գերակշիռ մասի կարծիքին առ այն, որ Հայաստանում ռեսուրսները ոչ արդյունավետ են օգտագործվում:
7. Վիճելի է հեղինակի պնդումը առ այն, որ «ՀՀ-ն համեմատաբար աչքի է ընկնում ... և **եկամուտների բաշխման հավասարությամբ**՝ միջինից համապատասխանաբար ...

11%-ով ավելի բարձր արդյունքներով» (էջ 103): Սա խոսում է 78 երկրի ընտրության անկատարության մասին:

8. Հեղինակի կառուցած մոդելի արդյունքները որոշ դեպքերում վիճելի են: Այսպես, ըստ հեղինակի կրթությանն ուղղված պետական ծախսերի 1 տոկոս ավելացման դեպքում ՀՀ տնտեսության որակը կբարելավվի մոտ 0.15%-ով (առանց լագի): Սա առնվազն վիճելի պնդում է, քանի որ կրթության վրա ծախսերը ուղիղ ազդեցություն կարող են ունենալ տնտեսության որակի վրա տարիներ հետո (էջ 132-133):

   Հեղինակը առաջարկում է իջեցնել կամ բարձրացնել այս կամ այն ցուցանիշը կամ վարկանիշը, կամ «բեռը» հավասարաչափ բաժանել դրանց միջև (էջ 139-140)՝ մոռանալով օրինակ, որ վարկանիշի արդյունքը, ոչ միայն մեզանից, այլ նաև մյուս երկրներից է կախված, մյուս կողմից ՏՈԱԴՀ վարկանիշերից մեկում ավելի բարձր տեղ գրավելը ինքնանպատակ չէ և անգամ այդ տեղը գրավելը դեռ ոչինչ չի նշանակում արդյունավետության տեսակետից: Օրինակ, ՀՀ բարձր գնահատականը ՀԲ «Գործարարությամբ զբաղվելը» կամ «Տնտեսական ազատության» վարկանիշերում շատ չնչին դերակատարություն ուներ/ունի ներդրումների վրա: Կամ ինչպես պետք է իջեցնել ածխաթթու գազի արտանետումը տնտեսական աճի որակը ապահովելու վրա. փակենք ԶՊՄԿ-ն, թե արգելենք 7 տարուց ավելի մեքենաների ներմուծումը: Ինչ տնտեսական արդյունք կստանանք: Ավելին, ՏԱՈԴՀ-ում ներառված վարկանիշերից որոշները հաշվարկելիս այս կամ այն կերպ օգտագործվում են ՏԱՈՁՀ-ում ներառված որոշ ցուցանիշներ (մեկ շնչի ՀՆԱ, ածխաթթու գազերի արտանետում և այլն), ինչը կարող է հարցեր առաջացնել ստացված արդյունքների արժանահավատության մասով:

   Ընդհանուր առմամբ, մեր կարծիքով, սիմուլյացիոն մոդելի արդյունքներին այսպիսի «մեխանիկական» մոտեցումը կարող է հանգեցնել նրան, որ տնտեսության արդյունավետության և որակի բարձրացման հարցը քաղաքականություն մշակողների համար ներկայացվի որպես ուղղակի թվային վարժանքներ, բաց թողնելով որոշ գործընթացների էությունը:

9. Ցանկալի կլիներ, որ հեղինակը Ներածությունում ավելի լայնորեն բացահայտեր աշխատանքի արդիականությունը:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունը իրենից բավականին լուրջ հետազոտական աշխատանք է ներկայացնում: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, հիմնականում գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Հետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների

կիրառումը կարող է օգտավետ լինել ՀՀ տնտեսական արդյունավետության և աճի որակի բարելավման քաղաքականությունների մշակման գործում:

Աշխատանքի ինքնուրույնությունը, ամբողջականությունն ու հետազոտությունում օգտագործված հարուստ տեսական և գործնական նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ ատենախոսությունը արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են վեց գիտական հրապարակումներում:

Միքայել Արմենի Նավասարդյանի՝ **«ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վ. Ս. Լալայան**

Վ. Ս. Լալայանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝
Հայ-Ռուսական Համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ. **Ռ.Ս. Կասաբաբովա**

25 հուլիսի 2024 թ.